ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2023թ. ՆՄՈ/21 -Ա

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Արաքսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդներ Ա. Էնիաթյանի և Ա. Տեր-Խաչատրյանի կողմից 2023 թվականի հունվարի 13-ին ներկայացված դիմումը, «Արաքսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում դիմումում բարձրացված հարցերի ուսումնասիրության նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ս. Բուդաղյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Արաքսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Գ. Ստեփանյանին:
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ս. Բուդաղյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին իրականացնել մեկ աշխատանքային օրյա

ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնին (պետ՝ Ա. Համբարձումյան)՝ ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա. Ավետիսյանին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ, ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ 16.01.2023 Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

X

VERIFIED OCSP 16.01.2023 17:12:57 GMT+4

Подписано: AVETISYAN ARNAK 2714860109

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2023 թվականի հունվարի 16-ի
ՆՄՈ/ 21 -Ա որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Սոնյա Բուդաղյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան՝ Լիաննա Հարությունյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ՝ Արտակ Առաքելյան:

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

Արմավիրի մարզպետարան

Недействительная подпись

VERIFIED OCSP 16.01.2023 17:00:31 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023